Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1159 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԱԵՎ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ նաև փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ տնտեսական) բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը:

2. Տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման ենթակա են օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության տարեկան ծրագրով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը (այսուհետ՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծ):

3. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ ազդեցությունը գնահատող):

4. Նորմատիվ իրավական ակտի նախագիծ մշակող մարմինը նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով նախագիծը ներկայացնում է ազդեցությունը գնահատողին:

5. Ազդեցությունը գնահատողը նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատում և դրա վերաբերյալ եզրակացություն կազմում է նորմատիվ իրավական ակտի նախագիծն ստանալու օրվանից հետո 15-օրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի դեպքում՝ 5-օրյա ժամկետում:

6. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելիս՝ ազդեցությունը գնահատողը պարզում է նորմատիվ իրավա-

կան ակտի նախագծի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները:

7. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատվում է 3 փուլով՝

1) նախնական դիտարկումներ.

2) ծախսերի և օգուտների վերլուծություն.

3) կարգավորման ազդեցության գնահատման արդյունքներ:

8. Նախնական դիտարկումների ժամանակ կազմակերպվում են քննարկումներ տնտեսավարողների, այդ թվում՝ նաև փոքր և միջին ձեռնարկատերերի, ինչպես նաև ոլորտի այլ շահագրգիռ կողմերի հետ՝ հավանական ազդեցության նախնական գնահատման համար:

9. Եթե նախնական դիտարկումների արդյունքում հաստատվում է, որ տնտեսության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության վրա զգալի ազդեցություն չի կարող լինել, ապա կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվում են, և արձանագրվում են դիտարկումների արդյունքները, մասնակցած տնտեսավարողների և փոքր ու միջին ձեռնարկատերերի թիվն ու զգալի ազդեցություն չհայտնաբերելու կապակցությամբ հիմնավորված եզրակացությունը:

10. Նորմատիվ իրավական ակտի կիրարկման հետևանքները որոշվում են «ծախսերի և օգուտների» մեթոդով (ծախսերի և օգուտների վերլուծության փուլ):

11. Ծախսերն ու օգուտները գնահատվում են ըստ քանակական ցուցանիշների: Անհրաժեշտ է ծախսերն ու օգուտները հնարավորության դեպքում ցույց տալ դրամական տեսքով՝ յուրաքանչյուր տարբերակի ծախսերի և օգուտների միջև համեմատություն անցկացնելու գործընթացը դյուրացնելու նպատակով:

12. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելիս՝ ազդեցությունը գնահատողը հաշվի է առնում այն հանգամանքը, որ նախագիծը կարող է ազդել՝

1) տնտեսական աճի ապահովման և ներդրումների ներգրավման վրա.

2) գործարար միջավայրի բարելավման վրա (ըստ «Գործարարությամբ զբաղվելը Հայաստանում» բարեփոխումների հուշագրի հիման վրա կազմված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի).

3) փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ինդեքսի վրա (ՄԱԿ-ի մեթոդոլոգիայով հաշվարկվող):

13. Ազդեցությունը գնահատողը նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելուց հետո կազմում է նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացություն և ներկայացնում նախագիծը մշակած մարմին:

14. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելիս՝ ազդեցությունը գնահատողը դիմում է նախագիծը մշակած կամ այլ իրավասու մարմիններին ու կազմակերպություններին՝ նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման համար անհրաժեշտ լրացուցիչ հաշվարկներ և (կամ) հիմնավորումներ և (կամ) այլ տվյալներ և (կամ) տեղեկություններ ստանալու համար:

15. Նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակած կամ այլ իրավասու մարմինը կամ կազմակերպությունը սույն կարգի 17-րդ կետով նախատեսված հաշվարկները և (կամ) հիմնավորումները և (կամ) այլ տվյալները կամ տեղեկությունները (այդպիսիք լինելու դեպքում) ներկայացնում են ազդեցությունը գնահատողին՝ դիմումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ